CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Հունիսի 17, 2024թ.

ՔՈԱՖ խորհրդի անդամ և հանրահայտ դերասան Ջո Մանգանելոն ուխտագնացություն է կատարել դեպի Հայաստան

ԵՐԵՎԱՆ – «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (ՔՈԱՖ) հայտնում է դերասան, պրոդյուսեր, ռեժիսոր, հեռուստամրցույթի հաղորդավար Ջո Մանգանելոյի՝ վերջերս կատարած ուխտագնացության մասին դեպի իր նախնիների հայրենիք՝ Հայաստան:

Անցյալ տարի Նյու Յորքում տեղի ունեցած ՔՈԱՖ-ի ամենամյա 20-րդ Գալային հեղինակավոր մարդասիրական մրցանակի արժանացած հայտնի դերասանն այցելել է մեր երկիր՝ հաղորդակից լինելու ազգային ժառանգությանը և վերամիավորվելու իր հայկական արմատների հետ: Մանգանելոյի ուխտագնացության հիմքում ինքնաճանաչումն ու ինքնաքննությունն է: Ուսումնասիրելով իր նախնիների հարուստ պատմությունը՝ նա ձգտում է անցյալի թելերը հյուսել ներկայի հետ:

Դերասանը հանրության հետ կիսվել է իր ընտանիքի պատմությամբ, որպեսզի վավերացնի 1915 թվականին հայերի դեմ կատարված ոճրագործությունն ու օգնի մեղմել սերունդների ցավը: Նրա մայրական տատը՝ Հայոց ցեղասպանություն վերապրած Թերվիզ (Ռոզա) Դարաքջյանն է, որը փախստականների ճամբարում լույս աշխարհ է բերել Ջոյի տատին՝ Սիրարփիին: Այսպիսով, նա եկել է Հայաստան՝ իր ժառանգության հանդեպ խորը ակնածանքով ու հետաքրքրությամբ: Այս չափազանց անձնական ճամփորդությունը Մանգանելոյին հնարավորություն տվեց հետևել իր նախնիների հետքերին, այցելել այն վայրերը, որոնք ձևավորել են իր ընտանիքի պատմությունը և ծանոթանալ նրա անհատականության մաս կազմող մշակույթին, ավանդույթներին ու մարդկանց:

Մայիսին իր ընկերուհու՝ Քեյթլին Օ'Քոնորի և սիրելի շան՝ Բաբլզի հետ, Մանգանելոն 10-օրյա շրջագայություն կատարեց Հայաստանում՝ ծանոթանալով երկրի հարուստ պատմությանը, չքնաղ բնապատկերներին ու մշակութային ժառանգությանը: Աղմկոտ մայրաքաղաքից մինչև խաղաղ վանքեր ու փարթամ հովիտներ. Հայաստանն՝ իր ամբողջությամբ գերեց դերասանին:

CHILDREN
OF ARMENIA
FUND

Երևանի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ այցից հետո Մանգանելոն Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում ծառ տնկեց՝ ի պատիվ Թերվիզի և Սիրարփիի: Այս քայլը խորհրդանշում էր ոչ միայն ցեղասպանություն վերապրած իր նախնիների հիշատակը, այլև կյանքը, վերածնունդը և մարդկային աննկուն ոգին:

Ճամփորդության ամենավառ դրվագներից մեկը այցելությունն էր Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն: Իսկ Արմավիրի ՔՈԱՖ Երեխայի և ընտանիքի կենտրոններից մեկում դերասանը ոչ ծանոթացավ իմացավ գյուղաբնակ ընտանիքներին մատուցվող բազմաթիվ ծառայություններին, այլև միացավ այդ պահին նկարող երեխաներին: Մանգանելոն նաև մասնակցեց ՀՀ Նախագահի նստավայրում՝ Վահագն Խաչատուրյանի առանձնատանը կազմակերպված ընթրիքին և հանդիպեց Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատար Զարեհ Սինանյանին:

Մանգանելլոյի այցը Հայաստան ոչ միայն ճամփորդություն էր երկրի տարածքում, այլև ճամփորդություն ժամանակի մեջ: Հայաստանից նա հեռացավ հրաշալի բացահայտումներով և գիտակցումով, որ իր մի մաս կազմող երկրում պատմությունն ու արդիականությունը գոյակցում են ներդաշնակորեն:

Զո Մանգանելոյի մասին

Դերասան, պրոդյուսեր, ռեժիսոր, հրատարակված հեղինակ, Էմմի մրցանակակիր և հեռուստամրցույթի հաղորդավար Զո Մանգանելոն դերասանական բակալավրի կոչում է ստացել Քարնեգի Մելոնի համալսարանի դրամատիկական դպրոցում: Վերջերս նրան կարելի էր տեսնել՝ որպես *NBC*-ի բոլորովին նոր, հիթային սերիալի հաղորդավար՝ *"DEAL OR NO DEAL ISLAND"*:

Անցյալ տարի նա Ուսա Թուրմանի և Սեմյուել Լ. Ջեքսոնի հետ միասին նկարահանվել է *"THE KILL ROOM"* գեղարվեստական ֆիլմում, իսկ ներկայումս ավարտում է *eOne and Wizards of the Coast/Hasbro*-ի հետ համագործակցությունը *"Official 50 Year History of Dungeons & Dragons"* վավերագրական ֆիլմաշարի շրջանակում, որի ռեժիսորն ու պրոդյուսերն է ինքը:

Որպես դերասան՝ Մանգանելոն առավելապես հայտնի է *HBO*-ի «Իսկական արյուն» հեռուստասերիալից, Սթիվեն Սոդերբերգի «Սուպեր Մայք», Զաք Սնայդերի «Արդարության լիգա» և «Փի-Վիի մեծ արկածները» ֆիլմերից: Ժամանակ առ ժամանակ նա վերադառնում է նաև բեմ, վերջին անգամ Յեյլի Ռեպերտուարային թատրոնում *"A STREETCAR NAMED DESIRE"* բեմադրությունն էր, որտեղ նա խաղում էր Սթենլի Կովալսկու դերը: Նրան կարելի է տեսնել նաև Վինս Վոնի, Սյուզան Սարանդոնի և Լորեն Բրակոյի կողքին "NONNAS" կատակերգական ֆիլմում, որը կինոթատրոնի էկրաններին կհայտնվի այս տարեվերջին:

Նա ֆինանսավորել և եղել է *“LA BARE”* մրցանակակիր ֆիլմի ռեժիսորն ու պրոդյուսերը, ինչպես նաև խաղացել *“BOTTOM OF THE 9TH”, “SHOPLIFTERS OF THE WORLD”, and “ARCHENEMY”, “SABOTAGE”, “THE SPINE OF NIGHT”, “SMURFS: THE LOST VILLAGE”, Sam Raimi’s “SPIDER-MAN”, “ONE TREE HILL”, “WHAT TO EXPECT WHEN YOU’RE EXPECTING”, “MYTHIC QUEST”, “ER” & “HOW I MET YOUR MOTHER”* ֆիլմերում: Մանգանելոն տարիներ շարունակ *“Dungeons & Dragons”*-ում աշխատել է որպես խորհրդատու, ինչի արդյունքում նրան առաջարկել են մշակել Նյու Յորքի ամենավաճառվող *"DRAGONLANCE"* վիպաշարի հեռուստատեսային տարբերակը: Նա Փիթսբուրգի *UPMC* մանկական հիվանդանոցի խորհրդի անդամ է:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի Զարգացման գծով փոխնախագահ
Հայկ Բոյաջյան
Էլ. հասցե՝ *haig.boyadjian@coaf.org*